



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1933-0

Հ. Ս. Կ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

ԳԻՐՔ № 22

# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՋԱՐԿՄԱՆ ՈՐԵՆՔԸ

ՅԵՎ


## ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Կ. ԿՆՆՏՐՈՆՈՎԱԾՆ ԳՈՐԺՈՎԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.



ԳԻՐԲ № 22

# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՋԱՐԿՄԱՆ ՈՐԵՆՔԸ

ՅԵՎ

ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

A  $\frac{17}{25159}$



**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԳԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

ՅԵՐԵՎԱՆ

1929 թ.



ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 2612  
ԳՐԱՌԵՊ. 683 — ՏԻՐԱԺ 1200

# ՎՈՐՈՇՈՒՄ ՀՍԽՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

1928 թ. հունվարի 28-ին

Ի վերացումն ՀՍԽՀ Կենտրոնականի 1926 թ. սեպտեմբերի 15-ի «Գյուղական բնակչու-  
թյան իրավունքների մասին՝ տեղական կարիք-  
ները բավարարելու վերաբերմամբ» վորոշման  
(ՀՍԽՀ Որ. և Կարգ. Ժող. 1926 թ. № 11, հոդ.  
97) և ի վարդացումն ԽՍՀՄ Կենտրոնականի ու  
Ժողովոմխորհի 1927 թ. սպետտեմբերի 24-ի «Բնակ-  
չության ինքնահարկման մասին» վորոշման  
(ԽՍՀՄ Ո. Կ. Ժ. 1927 թ. № 51, հոդ. 510)  
Կենտրոնականի Գործադիր Կոմիտեն վորոշում և  
հաստատել և կիրարկելու թյան դնել հետևյալ  
վորոշումը.

## I

1. Հասարակական ինքնագործունեյու-  
թյանը զարկ տալու և տեղական բնակչությանն  
իր միջոցներով իր կուլտուր-անտեսական կյան-  
քի առանձին կարիքները բավարարելու հնա-  
րավորություն տալու նպատակով՝ դյուղի քա-  
ղաքացիներին ընդհանուր ժողովներին իրավունք  
և վերապահվում վորոշումներ կայացնելու  
պարտադիր ինքնահարկման մասին:

2. Ինքնահարկումը թույլ և արվում բացա-  
ռապես հետևյալ կարիքները բավարարելու հա-

ժար. ա) կուրտուր-կրթական, սոցիալական ապահովագրութեան, ինչպէս նաև գյուղատնտեսութեան բարձրացման նպաստող հիմնարկութեաններ, այն ե՛ր գւրոցներ, գրադարաններ, խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ, կարմիր անկյուններ, ժողովրդական տներ, մանկական մասրներ և մանկատներ ու մանկապարտեզներ, գյուղատնտեսական կաշաններ, հացապաշարի խանութներ, հաշմատներ, գառամյաշների աներ, գիշերոթի աներ և այլ հիմնարկութեաններ կառուցելու և անտեսապես պահպանելու համար (նորերի կառուցում, կիսատի ավարտում, ընդարձակում, հիմնական և ընթացիկ վերանորոգութեան, շէնքերի վարձակալութեան, կահավորում, տաքացում, լուսավորութեան և այլն), բ) ճանապարհային շինարարութեան համար (հասարակական նշանակութեան ունեցող գյուղական, ինչպէս նաև դաշտային ճանապարհների, կամուրջների և գետանցների կառուցում, նորոգութեան և պահպանութեան), գ) հակահրդեհային պաշտպանութեան համար (հրդեհաշեջ գեպոների ու սրահների կառուցում, սարքավորում, պահպանութեան և սպասարկութեան), դ) գյուղի բարեկարգութեան համար (ջրհորների, հանրային աղբյուրների, լճակների և այլ ջրամբարների, հրապարակների ու փոսոցների և բաղնիքների կառուցում ու բարեկարգ պահպանութեան) և ե) գյուղի պահպանութեան համար:

Ծանոթութիւն.—Արդեւիւմ ե ինքնահարկում կատարել վարչական բնութի կարիքները (իշխանութեան տեղա-

կան մարմինները—գավառակային գործ-  
կամների, գյուղխորհուրդների, միլիցիա-  
յի աշխատակիցների և գյուղական կա-  
տարածուների վարձատրութեան, այդ  
մարմինների շենքերի պահպանութեան  
ու կահավորման, ինչպես նաև նրանց  
գլխավորական, շրջագայութեան և այլ  
ծախքեր) հոգայու համար:

3. Քաղաքացիների ընդհանուր ժողովնե-  
րը գումարվում են գյուղխորհուրդի կամ քաղա-  
քացիների առանձին խմբի նախաձեռնութեամբ այդ  
ժողովներն օրինական են համարվում, յեթե  
ներկա յե լինում այլալ գյուղի բնորոշների  
առնվազն 1—2-ը:

Ծանոթութեամբ.— Յեթե ինքնա-  
հարկման հարցի տախտիկ նշանակված ա-  
ռաջին ընդհանուր ժողովին ներկա լինել  
ընտրական իրավունք ունեցող քաղաքա-  
ցիների ընդհանուր թվի կիսից պակաս,  
սպա ընդհանուր ժողովը նշանակվում է  
յերկրորդ անգամ:

Յերկրորդ ընդհանուր ժողովում ինք-  
նահարկման վերաբերյալ հարցերը յու-  
ծելու համար պահանջվում է, վորպես-  
զի ներկա լինել ընտրական իրավունք ու-  
նեցող քաղաքացիների ընդհանուր թվի  
առնվազն մի յերրորդ մասը:

4. Ընդհանուր ժողովներում վորոշումները  
կայացվում են ներկա յեղողների ձայների պարզ  
մեծամասնութեամբ:

5. Քաղաքացիների ընդհանուր ժողովներն  
իրենց վորոշումներով սահմանում են կիրառ-

կելիք ձեռնարկումները, նրանց իրազորման համար անհրաժեշտ միջոցների շափր, ինչպես նաև այն ստավերագույն ժամանակամիջոցը, վորի բնթացքում կարող են կատարվել ինքնահարկման մուծանքները. յեթե ինքնահարկումը սահմանվում է գրամական պարբերական մուծանքների ձևով, ապա վորոշվում է նաև այն, թե վորքան ժամանակով է սահմանվում ինքնահարկումը, և այդ ժամանակամիջոցը չի կարող մի տարուց ավելի լինել: Ընդհանուր ժողովներն են վորոշում նաև քաղաքացիների մասնակցության յեղանակը—գրամով, անձնական աշխատանքով կամ բնական պարհակով: Այս վորոշման կարգով յուրաքանչյուր ավյալ վայրում մի տարվա բնթացքում գանձվող բոլոր տուրքերի գումարը չի կարող ավելի լինել, քան ավյալ վայրի համար նույն տարում սահմանվող գյուղատնտեսական հարկի գումարի 35 տոկոսը:

Մակոթուրյուն.—Յեթե բացառիկ դեպքերում ընդհանուր ժողովը վորոշի ինքնահարկման կարգով ավյալ ձեռնարկումն իրազործելու համար ավելի ծախսել, քան ավյալ գյուղի վրա նույն տարում ընկնող միասնակի գումարի 35 տոկոսը, ապա այդ վորոշումը կարելի յե իրազործել Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից հաստատվելուց հետո:

6. Մի ընդհանուր գյուղխորհուրդ ունեցող յերկու կամ ավելի գյուղերի ընդհանուր կարիքները բավարարելու դեպքում ինքնահարկում կատարելու հարցը կարող է յուծվել թե

յութաքանչյուր դյուզի քաղաքացիներն ընդհանուր ժողովում, առանձին և թեև շահերգոված բոլոր դյուզերի քաղաքացիներն միացյալ ընդհանուր ժողովներում, վորք հրավիրում և դյուզխորհուրդք իր հատուկ վորոշմամբ, այսպիսի միացյալ ընդհանուր ժողովներում պետք և ներկա լինի յութաքանչյուր շահազրգոված դյուզի քաղաքացիներն (ընտրական իրավունք ունեցող) ընդհանուր թվի առնվազն կես մասը:

7. Պյուզխորհուրդն իրավունք ունի ինքնահարկում ից ազատելու աչն քաղաքացիներին, վորոնք վոչ գրամով, վոչ անձնական աշխատանքով և վոչ բնական պարհակով հնարավորություն չունեն մասնակցելու կառարվելիք ծախսերին. նրանց ցուցակք դյուզխորհուրդք նախապես ներկայացնում և բնդհանուր ժողովին ի հավանություն:

8. Ինքնահարկման կարգով սահմանված ատուքերի բաշխումը և դանձումը կատարում և ծախսերի մանրամասն նախահաշիվը կազմում են դյուզխորհուրդները, անպայման հաշվի առնելով հարկի յենթարկվող անասության հասույթարեքությունը և ուժը, ինչպես նաև կիրառելով պրոգրեսիվ հարկման սկզբունքը, այսինքն՝ անասության հասույթարեքություն ավերանալու համեմատ ավերացնելով նաև ատուքի չափը:

Ծանոթություն. — Պետական ծառայության մեջ գանվող և ինքնուրույն դյուզացիական անասություն չունեցող անձինք ինքնահարկմանը չեն մասնակցում աչն զեպքերում, յերբ նրանք ան-

միջակհան շահ չեն ստանալու այն ձեռնարկումներին, վորոնց իրազորման համար կատարվում է ինքնահարկումը:

9. Քաղաքացիներին ընդհանուր ժողովի՝ ինքնահարկման վերաբերյալ վորոշումները գյուղխորհուրդը բաշխման ցուցակի հետ և իր յեղրակացությամբ ներկայացնում է գավառակային գործադիր կոմիտեյին ի հաստատություն: Յեթե վորոշումն ու բաշխման ցուցակը գավառակային գործկոմ ներկայացնելուց հետո յերկու շաբաթվա ընթացքում մերժում չբառացվի, վորոշումն ու բաշխումը համարվում են հաստատված և պարտադիր են ավյալ գյուղի բոլոր քաղաքացիներին համար:

10. Բաշխումը գավառակային գործկոմի կողմից հաստատվելուց հետո 5-րդ հոգվածում հիշատակված ձեռնարկումների իրազորման ժամանակի, ինչպես նաև քաղաքացիներից յուրաքանչյուրին ընկած գումարի չափերի մասին հայտարարվում է ընդհանուր ժողովում, ինչպես նաև գրավոր ծանուցում է արվում՝ գյուղխորհրդում համապատասխան հայտարարություններ կախելու միջոցով:

11. Բացի նախորդ հոգվածներով նախատեսված պարտականություններից, գյուղխորհուրդները ա) սահմանում են ինքնահարկման կարգով կատարվելիք մուծանքների ժամկետները, ինչպես նաև վորոշում են, թե քաղաքացիները յերբ պետք է ներկայանան իրենց աշխատանքային պարտականությունները կատարելու՝ համաձայն քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշումների, բ) կատարում են անհրաժեշտ գնումներ, կնքում են պայմանագրեր՝

համաձայն ընդհանուր ժողովի վորոշման և գործող սրենքների, գ) ղեկավարում են աշխատանքային մասնակցութեան կարգով կատարվող ամբողջ աշխատանքները, բաշխում են քաղաքացիների միջև առանձին պարտականութեւնները, նշանակում են աշխատանքների ղեկավարներ, հաշվառման են յենթարկում կատարված աշխատանքը և քաղաքացիների կողմից աշխատանքի ներկայանալը:

12. Ինքնահարկման կարգով գանձվող գումարները և ստացվող կամ ձեռք բերվող նյութերը գյուղխորհուրդը պահում և այդ մասին գոյութեւն ունեցող սրենքների համաձայն և ծախսում և բացառապէս այն նպատակների համար, վորոնք նախատեսված են ընդհանուր ժողովի վորոշումներով. հակառակ ղեկքում գանցատուները հետապնդվում են քրեական կարգով:

13. Յեթե քաղաքացիների ընդհանուր ժողովն այս կամ այն պատճառով հնարավորութեւն չունենա ծրագրված աշխատանքները կատարելու, ապա նա իրավունք ունի վորոշում կայացնելու կամ գանձված միջոցներն ըստ պատկանելուցն վերադարձնելու կամ այդ միջոցներն ուրիշ նպատակով գործադրելու մասին: Այդ վորոշումը ներկայացվում և գավառակային գործկոմին Զ-րդ հոգվածի կարգով:

14. Յեթե սվյալ գյուղի քաղաքացիներից վորևեմեկը չկամենա հոժարակամ վճարել իր վրա դրված գումարը, կամ կատարել անձնական աշխատանքն ու բնական պարհակը, ապա դրամըն ու անձնական աշխատանքի և բնական պար-

հակի համարժեքը գանձվում և գյուղխորհրդի կողմից հարկադիր կարգով, գյուղկատարածուի միջոցով:

Ծանոթութիւն.— Անձնական աշխատանքը և բնական պարհակը դրամով փոխարինելու նորմաները վորոշում են գավառակային գործադիր կոմիտեները, նկատի ունենալով տվյալ վայրում բանվորական ուժ և բեռնակիր անասուններու սայլեր վարձելու դները, և հաստատում են գավառային գործադիր կոմիտեները:

15. Գյուղխորհրդի անկանոն գործողութիւններէ դեմ յոթն որվա բնթացքում գանգատ կարելի չե տալ գավառակային գործադիր կոմիտեյին, իսկ վերջնի վորոշումներէ դեմ— գավառային գործադիր կոմիտեյին, վորի վորոշումները վերջնական են համարվում: Գանգատ տալը չի կասեցնում բողոքարկված կարգաբաժնի յուններէ կատարումը:

16 Գյուղխորհուրդների գործունեյության վրա՝ քաղաքացիներէ բնդհանուր ժողովներէ վորոշումներն իրագործելու և ինքնահարկման կարգով ստացվող գումարները ծախսելու ապարիզում հսկում են գյուղխորհուրդներին կից գյուղական վերստուգիչ հանձնաժողովները, ինչպես նաև գավառակային գործադիր կոմիտեները:

Ծանոթութիւն.— Ինքնահարկման կարգով գանձվող միջոցները պահելու և ծախսելու վրա հսկում են նաև Ֆինսոցկոմատը և նրա տեղական մարմինները,

վորոնք ղեկավարում են Ֆինժողկոմատի  
համապատասխան հրահանգներով:

17. Գրավառային գործկոմների վրա պարտականություն և դրվում ընդհանուր հսկողություն ունենալու գյուղխորհուրդների և դավառակային գործկոմների գործունեյության վրա ինքնահարկման ասպարիզում:

## II

18. Այս վորոշմամբ շնախատեսված այլ ղեկքերում հասարակական կարիքների համար ընակչության ինքնահարկում կատարելը թույլ և արվում միայն քաղաքացիների հոժարակամ համաձայնության սկզբունքներով:

19. Կամավոր ինքնահարկման վերաբերյալ վորոշումները կարող են կայացվել գյուղական ժողովներում և քաղաքացիների այլ ժողովներում, ճիշտ կերպով ցույց տալով թե ինչ նպատակով և կատարվում ինքնահարկումը, ինչ չափերով և ինչպես և բաշխվելու այն անձանց միջև, վորոնք քվեարկել են ինքնահարկման վերաբերյալ վորոշման ոգտին, այլև ինչպես են ծախսվելու ինքնահարկման կարգով գանձվելիք միջոցները, ինչպես և իրականացվելու միջոցների ծախսման հսկողությունը: Այդ վորոշումները պարտադիր չեն այն անձանց համար, վորոնք ներկա չեն յեղել ժողովին, ձեռնըպահ են մնացել քվեարկության ժամանակ կամ դեմ են քվեարկել:

20. Կամավոր ինքնահարկման հարցերի վերաբերմամբ ծագող բոլոր վեճերը լուծվում են միայն դատական կարգով. այդպիսի դեպքերում վարչական ներգործության կամ հարկադրանքի

վորւեք միջոց կիրարկելը թույլ չի տրվում :  
Գյուղխորհուրդներին և վարչական ու Ֆինանս-  
սական մարմիններին արգելվում է մասնակցել  
ինքնահարկում կատարելուն և առանձին քա-  
ղաքացիներից, հասնելիք տուրքերը գանձե-  
լուն :

21. Հոժարակամ ինքնահարկման կարգով  
գանձվող միջոցները նախորոշված նպատակնե-  
րի համար չծախսելու դեպքում հանցավորները  
հետապնդվում են քրեյական կարգով :

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նա-  
խագահի անդակալ՝ Հ. ԱՉԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի  
քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Յերևան

---

## ԻՆՔՆԱՀԱՐԿՍԱՆ ՈՐԵՆՔԸ

(Մատչելի պարզարանություն)

Մեր գյուղի կուլտուրական և տնտեսական կարիքներն որեցոր աճում, մեծանում են: Գյուղը կարիք և զգում դպրոցների, խրճիթ-ընթերցարանների, գրադարանների, գյուղատնտեսական կայանների, բաշխիչների և այլն:

Գալստահային բյուջեն չի կարողանում բավարարել այդ կարիքները, իսկ մեր գյուղական խորհուրդները, ինչպես հայտնի յե, մինչև որս դեռ չունին հատուկ բյուջեներ:

Աշխատավոր գյուղացիությունը վաղուց և բմբռնել, հասկացել այս դրությունը և գտել և ճանապարհը: Նա ինքնաձարկման միջոցով միշտ բավարարել և իր անհրաժեշտ, անհետաձգելի, կուլտուրական, տնտեսական և շինարարական պահանջները ու այդպիսով զարկ տրվել խորհրդային գյուղի կենդանացմանը, ամբապնդմանը:

Սակայն գյուղերում կիրարկվող ինքնաձարկումը միշտ կրել և անկազմակերպ բնույթ, վորից առաջին հերթին ճարպիկորեն ոգավելիս և յեղել գյուղի շահագործողը:

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմխարների Խորհրդի 1928 թ. հունվարի 28-ի «Բնակչության ինքնաձարկման մասին» նոր որենքը, վերացնելով գյուղերում փաստորեն գոյություն ունեցող

ինքնահարկման թերութիւնները, միաժամանակ ճիշտ կերպով կարգավորում եւ ինքնահարկման գործը եւ դնում եւ որինական հիմքերի վրա: Նա պարզ ու վորոշակի պատասխանում եւ մի շարք հարցերի. ի՞նչ նպատակների համար կարելի չի ինքնահարկում կատարել, ի՞նչ կարգով պետք եւ կատարվի ինքնահարկումը, ինչպե՞ս պետք եւ ծախսվեն գանձված միջոցները, ի՞նչ պարտականութիւններ ունի այդ ասպարիզում գյուղհասարակութիւնը, Վերատուգիչ Հանձնաժողովը եւ այլն: Ներկայումս մեր նպատակն եւ պարզաբանել գյուղացիներին ինքնահարկման նոր որենքի կարևոր կողմերը:

## ԻՆՁ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԻՆՔ-ՆԱՀԱՐԿՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ

Որենքը թույլ եւ սալիս ինքնահարկում կատարել բացառապէս գյուղի անտեսական եւ կուրտուրական կարիքների համար, այն ե՛ր պարոցների, գրագարանների, իրճիթ-ընթերցարանների, ակումբների, կարմիր անկյունների, ժողովրդական սննդի մանկական մսուրների, մանկատների, մանկապարտեզների, գյուղատնտեսական կայանների, հացապաշտրի խանութների, հաշմանդամների սննդի, գառամ յալների սննդի, գիշերելու սննդի, գյուղական ճանապարհների, կամուրջների, գետանցքների, հրդեհաչեջ գեպոների, սրահների, ջրհորների, հանրային ազդրուրների, լճակների, ջրամբարների, հրապարակների, բաղնիքների կառուցման, վերանորոգման, բնագարձակման, պահպանութիւնն եւ սպասարկու-

Թխան համար, ինչպես նաև գյուղի պահպանութիւն կարիքները հոգալու համար:

Այստեղից պարզ է, վոր գյուղական հասարակութիւնը հենց այսօր ցանկութիւն ունենալով դպրոց կառուցելու, հինը վերանորոգելու, կամ դպրոցի սենյակներէ թիւն ավելացնելու, կամ յեթէ դպրոցի շէնքը մասնավոր քաղաքացու յէ պատկանում, նրա վարձը հոգալու, ինչպես նաև դպրոցի լուսավորութիւն ու վառելիքի ծախքերի համար կարող է ինքնահարկման յեղանակով միջոցներ ստեղծել և գործադրել: Գորոց կառուցելու հարցը մի որինակ էր, նույնը կարելի չէ ասել և խրճիթ-ընթերցարանների ու տիպոգրֆերի, ազբյուրների, բաղնիքների մասին և այլն:

**ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ՎԱՐՁՍԿԱՆ ԲԵՌԻՅԹ  
ԿՐՈՂ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼ**

Յերբեմն տեղերում գյուղացիներն ասում են, մեր գյուղխորհրդի նախագահը, քարտուղարը կարիքներ ունեն, յեկեք նրա սոճիկն ավելացնենք, կամ՝ գրտսենյակը բավարար քանակութեամբ մատչաններ, թուղթ, թանաք չունի, յեկեք հոգանք այդ ծախսերը և ահա հիշյալ նպատակներով ինքնահարկում են կատարում: Որենքն այդ անելը խիստ արգելում է: Նա թույլ չի տալիս ինքնահարկում կատարել վարչական բնույթի կարիքները հոգալու, այն է՝ Գալաուակային Գործկոմների, գյուղխորհուրդների, միլիցիայի աշխատակիցների, գյուղական կատարածուների վարձատրութիւն, ինչպես նաև այդ մարմինների շէնքերի

պահպանութեան, կահավորման, գրասենյակա-  
յին և նման ծախքերը հողալու համար: Յեթե  
ինքնահարկման գումարները նման կարիքների  
վրա ծախսվեն, մեղավորները կենթարկվեն  
բրեյական պատասխանատվութեան:

### ՈՎ ԿԱՐՈՂ Ե ԿԱՏԱՐԵԼ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄ

Ինքնահարկումը կատարվում և միայն  
գյուղական հասարակութեան ժողովի վորոշ-  
մամբ: Ինքնահարկման հարցը այդ ժողովնե-  
րում կարող են դրվել թե գյուղխորհրդի, թե  
հասարակական կազմակերպութեւոնների և թե  
յուրաքանչյուր գյուղացու և կամ գյուղացիների  
մի խմբի առաջարկութեամբ: Գյուղի մի քանի  
յերիտասարդներ, գիտակցելով դպրոցի նշա-  
նակութեւոնը, կարող են գնալ և խնդրել գյուղ-  
խորհրդից, վոր նա դպրոցի կառուցման հարցը  
մտցնի հասարակական ժողովի քննութեան և  
ինքնահարկման միջոցով այդ կարիքների համար  
գումարներ գանձի և այլն:

Ժողովն որինական և համարվում, յեթե  
մասնակցում են ավյալ գյուղի ընտրողների  
առնվազն կես մասը: Յեթե գյուղում կա 300  
ընտրող, ապա որենքը պահանջում և, վոր ժո-  
ղովին ներկա լինի առնվազն 150 հոգի: Իհարկե  
պեաք և աշխատել, վոր բոլորն ևլ ներկա լի-  
նեն, սակայն գյուղ և, հազար ու մի ցավ ու-  
նի, մեկը կարող և մի կողմ գնալ, մյուսը՝ մի  
այլ գործի և ժողովին մասնակցելու հնարա-  
վորութեւոնից զրկվի: Կարող և և այնպես պա-  
տահել, վոր ժողովին մասնակցողների թիվն  
ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ-  
բի կեսից պակաս լինի: Այս դեպքում գյուղ-


խորհուրդը պարտավոր է հետաձգել ժողովրդի և հրավիրել յերկրորդ անգամ: Յերկրորդ ժողովին պետք է ներկա լինեն ընտրողների առնվազն մեկ յերրորդ մասը, այլապես դեպքում— 300—ից 100 հոգի:

Ընտրական իրավունքներից զրկված քաղաքացիներն իրավունք չունեն ներկա լինելու գյուղհասարակական ժողովին, մինչդեռ ժողովի փորձումն ինքնահարկման մասին պարտադիր է նաև նրանց համար:

Յեթև գյուղերն ունեն մեկ միացյալ գյուղխորհուրդ, ապա ինքնահարկման հարցի քննությունը կարող է կատարվել և առանձին-առանձին գյուղհասարակական ժողովներում, կամ յեթև հնարավոր է՝ միացյալ գյուղխորհուրդի մեջ մտնող գյուղերի հասարակությունների ընդհանուր ժողովներում:

**ԳՅՈՒՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՎՈՐՈՇՈՒ-  
ՄԸ ՊԵՏՔ Ե ՀԱՍՏԱՏՎԻ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ  
ԳՈՐԾԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ**

Գյուղհասարակության ինքնահարկման վերաբերյալ փորձումը և բաշխման ցուցակները գյուղխորհուրդը պարտավոր է ներկայացնել գավառակային գործկոմին հաստատելու համար: Գավառակային գործկոմն ուշադիր կերպով քննում է ցուցակները, յեթև անհրաժեշտ է, համապատասխան փոփոխություններ և մացնում և ապա հաստատում իր նախադասության նիստում, վորի մասին շատ ատեղեկացնում է գյուղխորհուրդին: Հաստատված ցուցակները գյուղխորհուրդը պարտավոր է կարգալ գյուղհասարակական ժողովում,



1798  
H 25159

վորպեսզի ամեն մեկը տեղյակ դառնա, թե ի՞նչ գումար և ինքը տալու, կամ ի՞նչ պարտականութիւն և գրվում նրա վրա: Պապառայան կային գործկոմի կողմից հաստատված վորուչումը և բաշխման ցուցակները պարտադիր են բոլորի համար, սրանց թվում նաև բնորական իրավունքներից զրկվածների, ձեռնպահների և նրանց համար, վորոնք բացակայել են ժողովից կամ դեմ են ձայն տվել ինքնահարկման վորոշմանը:

Պյուզխորհրդի սխալ և անկանոն գործողութիւնների դեմ ամեն մի գյուղացի ցուցակները հայտարարելուց հետո 7 օրվա ընթացքում իրավունք ունի դանդաղ տալու գալառակային գործկոմին, իսկ գալառակային գործկոմներին վորոշումների դեմ կարելի չէ դանդաղ տալ գալառային գործկոմին, վորի վորոշումները վերջնական են:

### ԻՆՔՆՏԱՐԿԻՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Ինքնահարկմանը գյուղացիները մասնակցում են կամ գրամով, կամ բնական պարհակով կամ թե անձնական աշխատանքով: Այս սկզբունքը շատ բով է: Մեկն ազատ փող ունի, փող և տալիս. մյուսը գերան ունի, քար, ցեմենտ, բեռնակիր անասուն, գրանցից մեկն ու մեկն և արամագրում. յերրորդը հնարավորութիւն ունի իր աշխատանքով մասնակցելու (բաննահ և, քարտաշ և, բանվոր և և այլն): Թե ս՞ով, ի՞նչ յեղանակով պիտի մասնակցի ինքնահարկման, վորոշում և գյուղական խորհուրդը:

ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ  
ԿԱՐԳԸ

Յենթազրենք, վոր գյուղը վորտչեց 210  
սուրբու ինքնահարկում կտատարել: Հարց ե ա-  
նաջ գալիս. ինչպե՞ս բաշխել այդ գումարը  
գյուղացիներին վրա: Ձե վոր գյուղում մեկն  
ուժեղ անտեսություն ունի, մյուսը՝ միջակ,  
յերրորդը՝ թույլ, և այլն: Որենքը պարզ ասում  
ե, վոր բաշխելիս պետք ե կիրառել պրոպրետ-  
արի սկզբունքը, այսինքն՝ ով շատ ունի, նա  
շատ պիտի տա, ով քիչ ունի, քիչ ե տալիս:  
Գյուղխորհուրդը բաշխման ցուցակները կազմե-  
լիս պարտավոր ե հաշվի առնել չուրաքանչյուր  
անտեսության ունեցած չեկամուտը և այդ չեկա-  
մուտի ավելանալու համեմատ ել ավելացնի ինքնա-  
հարկման գումարի չափը: Այստեղից պարզ ե,  
վոր գյուղի կուրակը, վորը ունի և նոյ և առե-  
տուր և կողմնակի չեկամուտներ, շատ ե տալու՝  
քան միջակը և չքավորը:

ՁԲԱՎՈՐՆԵՐԻՆ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱԶԱՏԵԼ  
ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄԻՑ

Գյուղական խորհուրդը, վոր մտտիկ ծա-  
նոթ ե չուրաքանչյուր գյուղացու գրությանը,  
կարող ե ինքնահարկումից ազատել չքավորնե-  
րին, վորոնք չեն կարող մասնակցել ինքնա-  
հարկմանը վոչ գրամով, վոչ բնական պարհակով և  
վոչ ել անձնական աշխատանքով. աչգալիսինքերի  
հարցը գյուղխորհուրդը ՓՈԿ-ի մասնակցությամբ  
քննության ե առնու մնախ իր նիստու մ ե ապա ցու-  
ցակը ներկայացնում հասարակական ժողովին  
և ստանում նրա համաձայնությունը:

ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՊԵՏՔ Ե  
ԾԱԽՍՎԵՆ ՎՈՐՈՇՎԱԾ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

Յեթի գյուղհասարակությունը 210 սուր-  
լու ինքնահարկում և կատարել միայն դպրոցի  
կառուցման համար, վոչ վոք իրավունք չու-  
նի այդ գումարը այլ բաների վրա գործադրե-  
լու: Տվյալ դեպքերում, յեթե հնարավորու-  
թյուն չկա ծրագրված աշխատանքը կատարե-  
լու, պետք և գանձված միջոցները վերադարձ-  
վեն գյուղացիներին կամ նույն հասարակու-  
թյան վորոշմամբ արամադրվեն ուրիշ նպա-  
տակների համար, ինչպես որինակ՝ խրճիթ-  
րնիթերցարանի, սկումբի, աղբյուրի և այլն,  
վորոնց մասին հիշատակեցինք սկզբում:  
Գյուղհասարակության այդ վորոշումը պետք և  
նույնպես հաստատվի գաղտնակալին գործկո-  
մի կողմից:

Այն գյուղխորհուրդները կամ գյուղացի-  
ները, վորոնք կշեղվեն այս սկզբունքից, կեն-  
թարկվեն պատասխանատվության:

ՈՎ ԶԻ ՎՃԱՐՈՒՄ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԳՈՒՄԱ-  
ՐԸ, ՆՐԱՆԻՑ ԱՅԴ ԳՈՒՄԱՐԸ ԳԱՆՁՎՈՒՄ Ե  
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ

Ինքնահարկման գումարները գյուղացինե-  
րից գանձում և գյուղխորհուրդը: Սակայն  
գյուղում կլինեն շահագործողներ, ասեւրա-  
կաններ և նման մարդիկ, վորոնք չեն ցանկա-  
նա կամավոր կերպով վճարել ինքնահարկման  
գումարները. չե՞ վոր խորհրդային գյուղի  
զարգացումը, ուժեղացումը նրանց ձեռնառու  
չէ: Այդպիսիների հետ գյուղական խորհուրդը

պեաք և խոսի հարկադրանքի յեղանակով, այն  
և՛ կարգադրի գյուղական կառարածունքին  
բռնազանձելու վորոչված գումարները:

**ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ  
ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ**

Նոր որենքը գիտավորյալ կերպով գյուղա-  
կան խորհուրդին մասնակից և դարձնում ինք-  
նահարկման աշխատանքներին: Կհարցնեն  
ինչո՞ւ: շատ պարզ և, միայն գյուղական իշ-  
խանության ակախի մասնակցությամբ հնարա-  
վոր և ճիշտ դասակարգային գիծ ասնել ինք-  
նահարկման աշխատանքների ասպարիզում,  
միայն նրա կենդանի վերահսկողությամբ հնա-  
րավոր և սպահովել ինքնահարկման գումար-  
ների կանոնավոր և իր նպատակին ծախսելու  
գործը, ինչպես նաև՝ ձեռնարկված աշխա-  
տանքների հաջող ընթացքը:

Այժմ տեսնենք ի՞նչ պիտի անի գյուղական  
խորհուրդը: Նախ՝ գյուղական խորհուրդը,  
թե իր նախաձեռնությամբ կամ քաղաքացինե-  
րի և հասարակական կազմակերպությունների  
գլխումների համաձայն հրավիրում և հասա-  
րակական ժողով և նրա քննությանը հանձ-  
նում ինքնահարկման հարցը: Ապա գյուղական  
խորհուրդը քննության և ասնում այն գյուղա-  
ցիների խնդիրը, վորոնք հնարավորություն չու-  
նեն մասնակցելու ինքնահարկման և այդպիսի-  
ներին ազատում և ինքնահարկումից: Փալան-  
տուղ Մարկոսը վո՛չ փող ունի, վո՛չ գերան, վո՛չ  
անասուն, չքավոր մարդ է. իհարկե նրա հար-

յը գյուղի իշխանությունը պետք է քննութեան առնի և ազատի ինքնաճարկումից: Յեթե գյուղի բռունցքին հարցնես, նա կասի—Մարկոսի ջանը դուրս գա, թող վերջին շուրջ ծախի, մեզ հետ հավասար մասնակցի ինքնաճարկման: Բայց այդ չպետք է թույլ տա շքավորութեան շահը պահպանող գյուղական խորհուրդը:

Գյուղխորհուրդի հետեյալ աշխատանքներից մեկն էլ այն է, վոր նա ինքնաճարկման դումարների բաշխում և կատարում և ինքն էլ գանձում այդ դումարները: Թե ի՞նչպես և կատարվում բաշխումը, դրա մասին մենք խոսել ենք արդեն: Գյուղական խորհուրդը վորտե՞ղում է նաև դումարները վճարելու ժամանակը, կամ թե յե՞րբ պետք է գյուղացին գա այս կամ այն աշխատանքը կատարելու, քարը, գերանը, հողը վճարեց և յե՞րբ պետք է բերի և այլն: Որքե՞նքը թույլ է տալիս նաև գյուղխորհուրդին գանազան գնումներ կատարելու, գանազան պայմանագրեր կնքելու. որինակ յեթե գյուղի գըպըրոցի համար անհրաժեշտ է ապակիներ գնել, կամ վարպետների հետ պայմանաւորվել, վոր նրանք յերկու շաբաթ աշխատեն նոր կառուցվելիք գըպրոցի վրա և այլն, այդ բոլորը կատարում է գյուղխորհուրդը: Գյուղական խորհուրդն է, վոր գեկավարում է նաև ձեռնարկվող աշխատանքները, միաժամանակ նա գյուղացիների միջև բաշխում է գանազան պարտականութեան, նշանակում է աշխատանքի գեկավարներ, հսկիչներ, հաշվի յե առնում կատարված աշխատանքները և հետեւում, վոր գյուղացիները և վարպետները և բանվորները ժամանակին գան աշխատանքի: Այս աշխա-

տանքները գյուղխորհրդի նախագահը մենակ չէ վոր պիտի կատարի, այլ նա պարտավոր է գործին մասնակից դարձնել գյուղխորհուրդի սեկյետներին, անդամներին, իսկ վերջիններս իրենց հերթին պետք է ամեն կերպ աջակցեն աշխատանքներին :

Ինքնահարկման կարգով ձևնարկված աշխատանքների, ծախսված գումարների, գործադրված պիտույքների մասին գյուղական խորհուրդը պարտավոր է ժամանակ առ ժամանակ հաշիվ տալ գյուղհասարակությանը, վորպեսզի, նախ՝ կասկածներ չլինեն, վոր գանձված գումարները իր նպատակին չի ծառայում, և յերկրորդ՝ վորպեսզի հասարակությունը հնարավորություն ունենա տեսնելու իր սված կոպեկները, աշխատանքների արդյունքը և վերջապես նկատված թերությունների մասին հնարավորութուն ունենա ցուցմունքներ տալու գյուղխորհրդին: Յեթե գանձված փողերը սխալ են ծախսվել, հավաքված նյութերը քամուն են տվել, կամ թողել են առանց հսկողության անձրևի, ձյունի տակ, գյուղական հասարակությունը չպետք է լռի, այլ պետք է ժողովում քննադատի գյուղխորհուրդին և առաջադրի թերությունները վերացնել:

### ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԵՐԸ

Վերստուգիչ հանձնաժողովները մեծ դեր ունեն ինքնահարկման գործի ասպարիզում: Յեթե վաղը պարզվեց, վոր այս կամ այն գյուղում ինքնահարկման գումարները յուրացրել են, այս կամ այն նյութերը փչացրել, գողա-

ցել և այլն, մեղքի գլխավոր ծանրությունն բնկնում և առաջին հերթին վերստուգիչ հանձնաժողովի վրա: Այս դեպքում յուրաքանչյուր գյուղացի կարող և սակ, վոր մեր վերստուգիչ Հանձնաժողովը քնած և յեղել, չի հետևել աշխատանքներին, ստուգումներ չի կատարել, վորից սղավել են գյուղի հանցագործ, ջուր պղտորող տարրերը:

#### ԿԱՄԱՎՈՐ ԻՆՖՆԱՀԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ի՞նչ նպատակների համար կարելի յինքնահարկում կատարել» գլխում ցույց տված նպատակների համար ինքնահարկումը պարտադիր բնույթ և կրում. այսինքն՝ յեթե հասարակությունը վորոշեց այս կամ այն դամարը գանձել, այդ վորոշմանը պարտավոր են յենթարկվելու բոլոր գյուղացիները:

Բացի պարտադիր ինքնահարկումից, որենքը թույլ և ալիս և այլ կարիքների համար ինքնահարկում կատարել՝ միայն հոժարակամ համաձայնության սկզբունքով. որինակ՝ վաղը հենց նույն հասարակական ժողովը կամ մի խումբ գյուղացիներ կարող են ցանկություն ունենալ իրենց համար հովիվ, ջրպետ վարձելու, այլ շինարարական աշխատանքներ ձեռնարկելու և այլն: Վոչ վոք նրանց չի կարող արգելել: Հասարակությունը կամ գյուղացիների այդ խումբը վորոշում են կայացնում և իրենք ևլ մարդ են նշանակում գանձելու: Գյուղխորհուրդը և այլ վարչական մարմինները իրավունք չունեն խառնվելու նման կարգով կատարվող ինքնահարկման գործին: Յեթե գյուղացիներից վորեկ մեկը չտվեց հովիվ վարձը, չի թույ-

լատրվում նրանից գանձել վարչական կարգով,  
այլ նման գեպքերում պետք է գիմել գատարան  
կամ գյուղխորհրդի գատսեկցիային և գատա-  
կան կարգով նրանից գանձել պարտքը:

Հստակապես համաձայնութեան սկզբուն-  
քով կատարված ինքնահարկման գումարները  
պետք է ծախսվեն այն նպատակների համար,  
վորի համար գանձված են, հակառակ պարա-  
գայում այս սկզբունքը խախտողները կեն-  
թարկվեն որինական պատասխանատվութեան:

Հայկենագործկոմի Կազմբաժնի վարիչի  
տեղակալ՝ Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՊԼԱ Հիմնարար Պիտ. Գրադ



220025159



00 28

A <sup>II</sup> 25159

የተገኘ ለ 10 ህግ.

ከሀክሎ ጋራ ጋራ ጋራ